

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019 թվականի սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ Ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Լուսինե Ազարյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
3. Ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը և ժամանցը նպատակային կազմակերպելու հարցը:
4. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

1. Լսեցին- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ 10-րդ^ա դասարանի ղեկավար Լուսինե Ազարյանը, որը ներկայացրեց ծնողական խորհրդի ընտրության կարգը:

Առաջարկվեց նոր՝ 2019-2020 ուսումնական տարվա համար ձևավորել դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց նշել մնացած չորս անդամների թեկնածուներին ևս: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն: Նախագահի թեկնածու առաջադրվեց –Մարինե Թորոյանը: Կատարվեց քվեարկություն: 24 կողմ, 0 դեմ ձայներով ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Մարինե Թարոյանը:

Որոշեցին.

10-րդ Ա դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

- | | |
|---------------------|-----------|
| 1. Թորոյան Մարինե | /նախագահ/ |
| 2. Թադևոսյան Լիլիթ | /անդամ/ |
| 3. Գալստյան Վերգինե | /անդամ/ |
| 4. Մանիշակ Սարգսյան | /անդամ/ |
| 5. Նարինե Բադալյան | /անդամ/ |

2. Լսեցին - Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ Լուսինե Ազարյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների լուծման հարցում: Նա հորդորեց ծնողներին՝ աջակցել դպրոցին, ուսուցիչներին՝ պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Դասավանդող ուսուցիչներին և դասղեկին օգնել՝ ձեռք բերելու կրթության գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ տեղեր, գրենական պիտույքներ և ժամանակին վճարել դասագրքերի վարձավճարները:

- Որոշեցին - Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տեղեր և կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը:

3. Լսեցին - Ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը և ժամանցը նպատակային կազմակերպելու հարցը:

- Որոշեցին - Անհրաժեշտ օգնություն ցուցաբերել նաև տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների ժամանակ:

4. Լսեցին - Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Ընթացիկ հարցերը քննարկելիս դասղեկը ներկայացրեց դպրոցի կանոնադրությունը՝ կապված դպրոցական ռեժիմի, դասացուցակի, դասարանում կատարվող հերթապահության և այլ հարցերի վերաբերյալ: Նշվեց, որ դպրոցն աշխատում է հնգօրյա ռեժիմով, դասերն սկսվում են ժամը 9⁰⁰-ին, ավարտվում՝ 15⁰⁰-ին: Նա ծնողներին հորդորեց լինել հետևողական իրենց երեխաների նկատմամբ ժամանակին դպրոց հաճախելու և դասերին միշտ պատրաստ լինելու հարցում, ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում:

Պետք է մշտապես պահել ծնող-դասուցիչ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու, աշակերտների վարքը և ուսման առաջադիմությունը բարձր մակարդակի հասցնելու համար, որ աշակերտները դպրոց հաճախեն ժամանակին ու պայուսակով, դասագրքերով, գրենական պիտույքերով ու աշակերտին վայել հագուկապով:

Առավել ուշադիր և հետևողական լինել անցումային տարիք և հոգեբանական բարդույթներ ունեցող աշակերտների հանդեպ:

Մտղական խորհրդի նախագահ՝
Քարտուղար՝

Թորոյան Մարինե /
Թադևոսյան Լիլիթ

10.09. 2019 թվական